ՍՈՒՐԲ ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐԱԾ ԱՂՈԹՔԸ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Օրհնյալ ես ամենակալ Տեր Աստված՝ Որդի և Բանդ Աստված, էակից և արարչակից Հորը, գոյակից և հավասակից Սուրբ Հոգուդ, էական բնությունից դ անմակտելի:

Անայլայլելի, անփոփոխելի, անսահմանելի, անպարագրելի, անհասանելի, անըմբռնելի, անսկիզբ, անժամանակ, անմահ, անիմանալի, աննառելի, անպատմելի, անբավելի, անթարգմանելի ծնունդ և ծոցածին Որդի, Հոր սահման և Խոսք, և փառակից Սուրբ Հոգուդ:

Իմաստություն և զորություն, նառագայթ և կերպարանք, ըստ էությանդ հավասարությամբ և գործակցությամբ միացած Հորը և Սուրբ Հոգուդ, ճանաչվում ես որպես մեկը եռյակ կատարյալ անձերից և Սուրբ Երրորդության նույն բնությունից, և երկրպագության ես արժանանում հրեղեններից ու հողեղեններից՝ ճանաչվելով կենդանիների ու մեռյալների Աստված և Տեր, աստվածների Աստված և տերերի Տեր, որ միայն Դու ունես անմահություն, անմատչելի լույսի մեջ բնակվածդ:

Որ Քո խոսքով ոչնչից լինելության կոչեցիր բոլոր արարածներին, Հոր հանությամբ և Սուրբ Հոգուդ գործակցությամբ արարչագործելով երկինքներն ու երկնայիններին, երկիրն ու սրա վրա առկա եղողներին:

Հաստատիչ լույսի ու խավարի, և բովանդակիչ բոլոր երևելիների ու աներևույթների:

Աննառատես գործնականացրիր երկինքները՝ ջրային, գնդաձև ու ամպահարմար, առագաստի նման տարածելով օդում, հովանավորելով ամենքին, որ երկրի վրա են. նաև ջուրը, որ երկնքի վերևում է, որն ամենագետ հաստատողիցդ հաստատվեց, և որը հաստատություն է կոչվում, որի վրա է հանգչում անբաժանելի Սուրբ Երրորդությունդ:

Եվ նրա մեջ եղած բաժանումների համաձայն կան անթիվ բազմահույլ զվարթուններ, որ լցնում են երկինքները. նրանց հորինեցիր որպես ամենասուրբ Երրորդությանդ փառաբանիչների:

Նաև լուսավորներին՝ առաջին լույսից մի մաս գոյացնելով և թաղանթապատելով, կարծես թե մի ամանի մեջ լցնելով և երկնքի պարուսկներում կառուցելով, որպեսզի իրենց Արարչի խնամարկությունն անդադար ընծայեն երկրին:

Որով և եղանակների շրջաններն ու ժամանակների փոփոխումները, որոնք արեգակից, լուսնից և աստղերից են ճանաչվում:

Նաև հորինեցիր երկիրն ամենայն հրաշատեսակությամբ՝ լեռներով, բլուրներով և զանազան դաշտերով, և լցրեցիր ինքնայծիլ բույսերով ու բարիքներով՝ որպեսզի բնակության վայր լինի գազաններին, անասուններին, սողուններին և թռչուններին, որպեսզի անխափան կերպով երկրից վայելեն մատակարարվածը, որով Քո հաղորդությամբ կերակրում ես ամենքին:

Եվ Քո հրամանով ծովերի համար տարբեր տեղեր որոշելով՝ ունայն ու թափուր չթողեցիր, այլ նաև դրանք լցրեցիր բազմազան կենդանիներով, որպեսզի ամեն ինչում երևաս Տեր և Արարիչ, Դատավոր և բոլոր եղանակների Դարմանիչ:

Եվ սրանց վրա որպես տեր և թագավոր արարեցիր մարդուն, որին որպես հող վերցնելով՝ կենդանի ստեղծեցիր՝ երևույթի փառազարդ ու լուսազգաց գեղազանությամբ և պայծառ տեսակով, և նրան որպես շնորհ իշխանական պատկեր պարգևեցիր, նրան երկրածիններին վրա իշխան և իշխող նշանակեցիր:

Եվ նրան դրեցիր փափուկ դրախտի մեջ, որ Քո հրամանով տնկվեց անթառամելի ու անապական՝ նրան ի վայելումն տրվելով, որպեսզի միշտ մնա անմահական տունկերի մեջ՝ անմահություն հագած, և միայն պահի դրված պատվիրանը, որ է՝ չուտել բարու և չարի գիտության ծառից:

Որովհետև և հրեշտակներին առավել սարսափելի ու սխրալի ցույց տվեցիր մարդու պատիվը, քան իրենցը:

Ուստի և նախանձելով մարդու պատվին, որն իրենից ավելի գերունակ փառքն և պայծառության մեջ էր, բանսարկու սատանան, որ այն ժամանակ հրեշտակային աստիճան ուներ, այնուհետև մտավ այն իմաստուն գազանի մեջ և նրանով էր խոսում նախաստեղծ կույսի հետ, որը ծանոթ չէր նրա բայրին, որպեսզի նրա միջոցով դյուրությամբ խաբի նրա զուգակցին՝ Ադամին:

Եվ նրանց՝ պտղի նշակումով, որից հրաման ստացան չուտել, հեշտությամբ նրանց մերկացրեց աստվածահրաշ զարդարանքներից՝ ստախոսությամբ խաբելով, աստվածներ կլինեք, ասում է, և կճանաչեք բարին ու չարը, աստվածությանը չհասան, սակայն բարին ու չարը ողորմելիները նանաչեցին:

Ուստի մերկանալով փառքից և անջատվելով անմահությունից, ողորմելի ու եղկելի արտաքինով, պատառոտված տերևով ծածկելով իրենց մերկությունը, ամենագետ աբարչիցդ թաքնվել կամեցան վարսավոր տնկի տակ, պատճառ եղան մեղքերի պատճառներին, որի պատճառով տարամերժվելով՝ անմահական դրախտից դուրս բնակվեցին տաժանելի ու տարակուսելի կյանքով, և Քո բարերարությունից հրաման ստացան այնուհետև տրտմությամբ ծնելու որդիներին, երեսի քրտինքով ուտելու հացը և վերադառնալու դարձյալ հողին, որից ստեղծվեցին:

Որի պատճառով մարդկային բնության վրա թագավորած մահը՝ ծառայելով մահացու մեղքերին և չար կամքի մեջ հետևելով բանսարկուի կամքին, մարդկանց ընկղմեց պես-պես կռապաշտությունների մեջ, մինչև որ նույնիսկ Քո արարչական սուրբ անունը տվեցին քարերին, փայտերին ու մեռելոտի ոսկորներին, որովհետև Քո նախախնամությունը, չափազանց զզջալով, հեռացավ մեր բնությունից, այդ պատճառով մարդկանց որդիները նվաճված էին դժոխքում և նստում էին մահվան ստվերների տակ:

Ապա Քո արարչական գթության խանդաղատանքով, Քո անարատ ձեռքով ստեղծվածներին տեսնելով մեղքերի կապանքներով պատված, չանտեսեցիր, այլ նախախնամական սիրով այցելության ելար՝ դարերի և ժամանակների մեջ երևալով:

Օրենքի տվեցիր, մարգարեներ ուղարկեցիր, որոնք սկզբից ևեթ նախասես ավետարանեցին Քո՝ դեպի մեր բնությունը խոնարհման մասին:

Եվ քանզի չափազանց չարաչար կերպով էինք խոցոտված բանսարկուից, ո՛չ օրենքը և ո՛չ էլ մարգարեները չկարողացան մարդկային բնությունը փրկել մահվան զորությունից, այլ կարոտ եղանք Քո մարդանալուն և մահանալուն:

Եվ քանզի չափազանց ողորմած ես ու մարդասեր, համբերատար ու քաղցր, մեր բնությունն իսպառ չթողեցիր ապականության մեջ, մեր մեղքերի համաձայն չվարվեցիր մեզ հետ և չհատուցեցիր մեզ ըստ մեր անօրենության:

Այլ խոնարհեցնելով երկինքները, իջար ամենօրհնյալ կույս Մարիամի անարատ արգանդը՝ Հոր ուղարկումով և Սուրբ Հոգուդ հաճությամբ:

Եվ Քո անխառնելի Աստվածությունը նոր խառնումով խառնեցիր մեր բնությանը:

Եվ Քո անշոշափելի էությունը մարմնի մեջ բանձրացնելով, Աստծո Որդիդ կույսի որդի եղար, և անժամանակդ անհաս տնօրհնությամբ մեզ համար ինը ամիս պարունակվեցիր կույսի որովայնում:

Եվ դրանից հետո անճառելի կերպով ծնվեցիր ամենօրհնյալ Աստվածածնից:

Սուրբ և առանց ախտի ծնունդ, որ հասկանալի է Քո Աստվածությանը, և հասանելի չէ մարդկանց:

Եվ մանկական կերպարանքով բազմելով ամենասուրբ Կույսի գրկում, կուսական կաթով սնվեցիր:

Ծնվեցիր որպես մանուկ՝ մինչև արքունիքի հասակը մարդկանց մեջ շրջելով որպես մեկը մարդկանցից:

Երեսնամյա տարիքում, ադամական մարմնի կատարյալ հասակով, եկար Հորդանան, Գառդ Աստուծո, որ վերցնում ես աշխարհի մեղքը, որպեսզի լվանաս Ադամի նեխած վերքերը:

Ամուլի որդի Հովհաննեսից մկրտվեցիր Հորդանանում և Քո գոյակից Հորից վկայվեցիր սիրելի Որդի և կատարյալ Աստված:

Ուստիև Սուրբ Հոգին, որն անբաժանելի է Քեզանից, աղավնակերպ իջմամբ Քո վրա, տեսնողներին բացահայտեց Քեզ որպես կատարյալ Աստված, որը եկել է կորած մարդկային ազգը փնտրելու:

Որովհետև նրանց, ովքեր վերստին են ծնվում կենդանի ջրից, որտեղ Քո աստվածախառն մարմինը մկրտությամբ թաղվեց, աներևույթ տեսքով շնորհների նույն կատարյալ հոգին ես ուղարկում դեպի մեր վերստին ծնունդները, որպեսզի մենք լինենք Աստծո որդիներ և ժառանգակիցներ Քո Աստվածությանը:

Եվ ապա այնտեղից սկիզբ դրեցիր մեր փրկության ավետարանությունը գործելուն և ուսուցանելուն, և մեզ սովորեցրիր հակառակ կանգնել չար դևի հնարքների դեմ, որը մարտնչեց Քեզ հետ՝ մկրտությունից հետո:

Որովհետև նա, ով այն ժամանակ Ադամի հետ մարտնչեց, Աստծուցդ կործանվեց, և դարձյալ կործանվելու է նրանց կողմից, որոնց վրա արտասանվել է Քո սուրբ անունը, և որովհետև դրա փորձն ունեցար, կարող ես և փորձանքի մեջ ընկածներին օգնական լինել:

Եվ մարդկանց կերպարանքով շրջելով երկրի՝ վրա, ճշմարիտ մարմնազգեցությամբ մարդկային կրքերն ամբողջովին կրեցիր Քո մեջ՝ մեղքից զատ և առանձին, աստվածահրաշ զորությունդ ամենքին բացահայտեցիր պես-պես ցավերի ու ախտերի մեջ, որ մարդկանց մեջ էին, և իշխանական վարդապետությամբ շատերին Քեզ աշակերտ դարձրեցիր:

Ապա եկար ցուցադրելու և հայտնելու Աստվածությանդ կերպարանքը, այն, ինչ հրեշտակները էին ցանկանում գոնե աղոտ կերպով տեսնել, այսօր Քո մարմնի մեջ ցույց տվեցիր Քո աշակերտներին՝ Թափոր լեռան վրա:

Քեզ հետ վերցնելով Քո աշակերտներից երեքին՝ վեմ Պետրոսին, որին արքայության փականքները խոստացար, և երկու եղբայրներին՝ Հակոբոսին և Քո սիրելի Հովհաննեսին, որոնք խոստացան Քեզ հետ ըմպել մահվան բաժակը, նրանց առանձնացրեցիր մարդահույլ բազմությունից՝ Քեզ հետ տանելով դեպի լեռը Թափոր:

Որպեսզի նրանք, ում խոստացար ցույց տալ Քո արքայությունը, Քո մարմնի մեջ տեսնեն Ադամի առաջին փառքի պայծառությունը՝ զգեստը, որից բանսարկուն մերկացրեց Ադամին, այն ցույց տվեցիր նրանց Քո մարմնի մեջ, և որպեսզի այն երկյուղոտ կարծիքը, որ ունեին Քո մահվան մասին, այսօր փարատելով հանես նրանց մտքերից՝ մարգարեների՝ Մովսեսի և Եղիայի վկայությամբ, որոնք երևացին Քեզ հետ Քո փառքի մեջ և խոսում էին Քո չարչարանքների մասին, որ կրելու էիր Երուսաղեմում:

Եվ որովհետև, կենդանիների ու մեռյալների Տերը լինելով, խաչի վրա Քո կամավոր մահը ամոթ չհամարեցիր:

Որով Քո փայլակնակայծակ նառագայթներից զարհուրած, այուն կարծվածները դեպի երկիր կործանվեցին՝ չափազանց և ահագնապես թմրած:

Որովհետև Քեզ տեսնելով ոչ թե ինչպես երեկ և առաջի օրը, այլ թե ինչպես ահագնակերպ նառագայթատեսիլ շողերը փոխակերպեցին Քեզ Քո աղորքի մեջ և արգելեցին արեգակի նառագայթները, և ովքեր ծանոթ չէին գլխավոր մարգարեներին, տեսան նրանց, որոնք եկել էին սպասավորելու Քո փառքին՝ սոսկալի տեսիլքով Քեզ հետ խոսակցելիս:

Եվ մինչ մտքում այդ մասին էին խորհում և թերաբաց Աստվածային փայլումից տարակուսած անշշունջ կանգնած էին, հանկարծ լուսավոր ամպը գալով՝ հովանավորում էր նրանց:

Եվ հայրական ձայնն էր, որ վկայում էր Քո մասին՝ Դա է իմ սիրելի որդին, ինչպես և այն ժամանակ Հորդանանում, այնուհետև դողացին հայրական ձայնից և երկյուղից այլևս կենդանությունը կորցրել էին, և եթե Քո ամենազոր զորությունը չպահեր նրանց՝ Աստվածահրաշ տեսիլքը չմոռացվելու համար, մեռած կլինեին, քան թե կենդանի:

Որովհետև և Պետրոսը Սուրբ Երրորդության խորհրդի մասին զարհուրանքից տաղավարաշինության մասին էր բարբառում, որովհետև մարգարեներին էլ էր Քեզ հետ թվակցում, որ նույն եռյակ անձնավորությունդ էր ցույց տալիս:

Նաև Քո աշակերտների եռյակ թիվը, որ Քեզ հետ իսկ էին սուրբ լեռան վրա, Քո երրորդական կերպն էր նշում, որպեսզի այսօր այդ երեք գաղափարակերպերից հաստատվի Սուրբ Երրորդության անքաժանելի անձնավորությունը:

Արդ, օրհնյալ է Քո փառքը, Տեր Աստված մեր, Քո սրբության տեղում, որ եկար լրացնելու օրենքն ու մարգարեներին՝ Քո բարձրանալով բարձր լեռան վրա, ավետարանիչդ Սիոնի:

Որովհետև Քոնն են երկինքները և Քոնն են բարձունքները, աշխարհն իր ամբողջությամբ Դու արարեցիր, ծովն ու ցամաքը Դու ստեղծեցիր, Թափորն ու Հերմոնը Քո անունով են ցնծում:

Քանզի այսօր ցնծում է Թափոր լեռը՝ իրենով կատարելով երգողի գրավոր մարգարեությունը:

Այսօր մեծապես խնդաց Թափոր լեռը՝ իր վրա տեսնելով հրաշացած եռյակ միավորությունդ:

Այսօր առավել է պարծենում Թափոր լեռը, քան լեռը Սինեական, որովհետև նրա վրա ամպ էր ու մեգ, խավար ու մառախուղ, ծուխ ու հուր, և անարժանների ոտքերին արգելված էր ելնել դեպի նա:

Իսկ սա մարմնացած Բանն Աստծուդ նառագայթարձակ կերպով հայտնում է Քո աշակերտներին և բոլոր որդիացածների մոտ Հոր ավետյաց բարբառն է հնչեցնում՝ լուսավոր ամպերով, որ արդարների համար են պատրաստված

ապագայում, իսկ ճանապարհները ու վերելքները պատրաստված են բոլոր այն մեղավորների համար, ովքեր գալիս են Քո լուսավոր հրամանների հետևից:

Որովհետև նրանք, ովքեր այսօր ջերմեռանդ սրտով ու հավատով մոտենում են Քո սրբության լեռանը, երկրավոր ցածությունից դյուրությամբ ուղևորվում են դեպի երկնավոր բարձրությունը:

Եվ արդ, բարերար ու խաղաղ, անոխակալ ու բազումողորմ Տեր, Քո պատրաստ բնակությունից հաշտ ու բաց աչքով նայիր Քո սրբության լեռանը և գթա այս ժողովրդին, որոնք հետևել են Քո հետքերին, որպեսզի հանդիպեն Քեզ Քո սրբության լեռան վրա և երկրպագեն այն տեղում, որտեղ կանգնած են Քո ոտքերը:

Թողություն տուր սրանց կամա և ակամա, գիտակցական և անգիտակցական մեղքերին:

Տուր սրանց սուրբ սիրտ, անզբաղ խորհուրդ և զգաստ միտք:

Հանիր սրանցից խարեղեն սիրտը և տուր սրանց մարմնեղեն սիրտ, և Քո Սուրբ Հոգին տուր սրանց՝ հեռացնելով ամեն չար բանից, և մոտեցրու բոլոր բարի գործերին՝ գնալ զորությունից դեպի զորություն և աստվածային տոների փառքից դեպի մշտնջենավոր փառքը ժառանգել:

Տեր, հերմոնական ցող ցողիր Սիոնի լեռան վրա՝ մեղքերի թողություն տալով սրանց:

Այլ թեպետև մենք օրըստօրե բազմացրեցինք մեր մեղքերը, սակայն Դու, Տեր, մեզ հետ մի վարվիր մեր մեղքերի համաձայն և մի հատուցիր մեզ ըստ մեր անօրենության. մենք՝ կավ, և Դու՝ մեր ստեղծիչը, և Քո ձեռքերի գործն ենք ամենքս:

Մեղանչեցինք, անօրենություն գործեցինք, հանցանք կատարեցինք և մեր ոտքերը խոտորեցրինք Քո շավիղներից, խստացրինք մեր սրտերը, որպեսզի Քեզանից չերկնչենք:

Դարձիր, Տեր, Քո մեծ փառքի համար, գուցե չժառանգենք Քո սրբության լեռը:

Որովհետև ոչ մեկին չունենք որպես ապավեն, բացի միայն արդարիցդ և անարատիցդ, խավիչդ մեր մեղքերի:

Իսպառ մի բարկացիր և Քո ձեռքերից մի թող Քո բանավոր հոտը՝ Քո սուրբ արյան գինը, որին Քեզ որպես ժողովուրդ սեփականեցրիր:

Այլ թեպետև մենք մեր գործերով բարկացրեցինք Քո սուրբ անվանը, արագորեն մեզ վրա ժամանեցին տեսակ-տեսակ հարվածներ՝ սով, սուր, գերություն, նեղություն, դիվական հարվածներ, հիվանդություններ, պես-պես ցավեր ու տաժանելի ախտեր, վշտեր երկնքից և վշտեր երկրից, մահտարաժամներ, անպետք ամպեր և խռովարար քամիներ, որովհետև կա՛մ փակվում են բարկությամբ, կա՛մ բացվում սաստկությամբ, այլև պես-պես պատահարներ մարդկանց և մեր անասունների ու անդաստանների հետ, և ոտքի կոխան եղանք նրանց համար, ովքեր չկարդացին Քո սուրբ անունը:

Այլ Դու, անոխակալ ու մարդասեր Տեր, թեպետև մենք մեղանչեցինք, սակայն ավազանի արգանդից դեպի Քեզ եկանք, և մեզ համար չկան օտար աստվածներ:

Դու ես մեր Հայրը, տեսուչն ու հովիվը, դարձիր դեպի մեզ, մեր փրկիչ Աստված, և մեզանից հետ դարձրու Քո պատուհասի ցասումը, որովհետև եթե մեզ հատուցես ըստ մեր գործերի, մենք ամեն օր մեր ճանապարհներն ապականել ենք մեր չար գործերով:

Այլ քանի որ Դու ես իշխանը, որ թողություն ես տալիս մեղքերին և մեզանից հեռացնում ես ախտերը, հիվանդությունները, հարվածներն ու մեղքերի ցավերը, Քեզ ենք դիմում ամեն օր:

Մեղանչեցինք երկնքի և Քո առջև:

Աստված, խավիր մեզ՝ մեղավորներիս:

Բաց մեզ, Տեր, Քո ողորմության դուռն օրվա շնորհիվ, որպեսզի ամոթով հետ չդառնանք, այլ արդարացած հեռանանք՝ ինչպես մաքսավորն ու մեղավոր կինը:

Եվ մեզ բարի բաժին տուր Քո սրբերի հետ, ովքեր ի սկզբանե հանելի եղան Քեզ՝ մեր փրկիչ Աստծուն, որպեսզի արժանի լինենք նրանց հետ փառավորել Քո անավոր ու խաղցր անունը, մեր Քրիստոս Աստված, Հոր և ամենասուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս, ամեն:

Խաղաղություն ամենեցուն

Առավելապես գոհանում և երկրպագում ենք Քեզ, մեր Քրիստոս Աստված, անշեջ ճառագայթ, որ Քո Աստվածության լույսն ես ծագեցնում Քո կամքը կատարողների և Քո սուրբ անունը փառաբանողների սրտերում:

Որ նաև մեր անարժանությանն արժանացրիր հասնել այսօրվա մեծ պայծառությանը և տոնակից լինել տոնասեր ու աստվածասեր անձանց, մանավանդ սուրբ հայրերին, որոնք տեղապահներն ու սպասավորներն են այն սրբությունների, որոնք թափոր լեռան կատարին են, որպեսզի նրանց աղոթքներով և բարեխոսությամբ մեզ ողորմես:

Ըստ որի և մենք՝ հավատացյալներս, հավաքված տոնում ենք ոչ թե ըստ մովսիսական տվչության հին վկայության խորանի, որը շինեց Ռեսելիելը, և կանգնեցրեց Մովսեսն ու իսրայելյան տոհմին այս օրը տոնել ավանդեց որպես տաղավարահարության տոն՝ անջնջելի ունենալով խորանի հիշատակը, որը շրջում էր նրանց հետ անապատում, և որը Մովսեսը վերցրեց Քո օրինակից ու օրինակ տվեց օրինակին:

Այլ մենք տոնում ենք Քո պայծառակերպության տոնը, որ ցույց տվեցիր Քո ընտրյալներին Թափոր սուրբ լեռան վրա, որովհետև Քո կամավոր խաչելությունից, կենդանի մեռելությունից, անմահարար թաղումից և Քո կենդանարար հարությունից, Հոր մոտ համբարձվելուց և Սուրբ Հոգուդ՝ առաքյալների մեջ իջնելուց հետո առավել սարսափելի ու սխրալի պատիվ տվեցիր լուսավորության օրվան:

Եվ սա մեզ բացեցիր որպես լույսի աղբյուր և ողորմության, կենաց ու փրկության դուռ՝ հինը փոխարկելով նորի, և ստվերը՝ ճշմարտության, որը Սուրբ Հոգուդ միջոցով հայտնեցիր Քո սուրբ առաքյալներին, տաղավարական խորանի փոխարեն առաքելական ու մարգարեական վեմի վրա որպես խորան շինեցիր Քո սուրբ եկեղեցին, որին որպես անկյունաքար Քեզ իսկ դրեցիր իբրև պատվական, հաստատուն ու անշարժելի վեմ:

Եվ խավության սեղանի փոխարեն, որի վրա անասունների արյունն էր մատուցվում, սրբարար սեղան հաստատեցիր, որի վրա պատարագվում հս, անարատ Գառդ Աստուծո, որ վերցնում ես աշխարհի մեղքը:

Եվ ստվերակերպ քահանայության փոխարեն մեզ շնորհեցիր Քո ճշմարիտ քահանայությունը:

Քո նոր ժողովրդի վերակացության առաջնորդության համար ընտրեցիր երանելի Հակոբոսին՝ Քո եղբորն ըստ մարմնի, որն այսօր ձեռնադրվեց սուրբ առաքյալներից, որոնք Քո ամենազոր աջից էին ձեռնադրությունն ընդունել:

Եվ այսօր պատարագվեցիր նորոգված դաստակերտի աստվածարյալ նորագյուտ սեղանի վրա, որտեղ և առաքյալների դասերը հայտնի կերպով տեսան Սուրբ Հոգուն՝ աղավնակերպ տեսիլով Սուրբ Սեղանի վրա իջնելիս:

Եվ Քո պատարագումով նրա վրա, Տեր Քրիստոս, ցույց տվեցիր այս օրը որպես ուխտերի ու պատարագների սկիզբ:

Որովհետև և՛ սեղանն է նոր, և՛ պատարագն է նոր, և՛ պատարագ մատուցողն է նոր, որ պատարագվեցիր մեզ համար այս նորոգատուր օրը:

Եվ օրհնության աղ հաստատեցիր մեր մեջ, որն է Սուրբ Հոգուդ նշմարիտ շնորհը, որը մեր նեխածությունը բժշկելու համար տվեցիր, և բոլոր շնորհներով, որ թե՛ հնում էր և թե՛ նորում, զարդարեցիր այս օրը. մեռյալներից Քո հարությունից հետո Գալիլիայում այս կերպարանքով երևացիր առաքյալներին, որովհետև նրանք, ովքեր այսօրվա հրաշքը տեսնողները չէին, երկմտեցին:

Եվ այս տեսությամբ Քո հաջորդ գալուստը շնորհում ես նրանց, ովքեր սիրեցին Քեզ, որպեսզի նույն ողջույնն ու խաղաղությունն ընդունեն Քեզանից:

Եվ արդ, մեր Տեր և Աստված, բարյաց տվիչ և առատ ողորմությունների պարգևատու, նաև այժմ քահանայական վերադիտողիս տուր առանց նենգության, հստակ հայացքով, սուրբ սրտով ու հաստատուն հավատով, անկեղծ սիրով ու աներկբա հույսով սպասավորել Քո սրբարար սեղանին, հաղորդվել Քո հաշտարար ու մեղսահավիջ մարմնին ու արյան և արժանապես հաղորդեցնել Քո նորածին ժողովրդին և սրբությամբ ու արդարությամբ հովվել Քո հոտին, որը գնեցիր Քո սուրբ արյամբ, որպեսզի նրանց բնակեցնես՝ վայրի խոտերի, և սնուցանես՝ հանգստյան ջրերի մոտ:

Տեր իմ Հիսուս Քրիստոս, մի նայիր իմ անարժանության վրա, որ արդ ամոթալից դեմքով կանգնած եմ Քո առջև՝ մեղայարտ անձովս:

Որովհետև Դու գիտես իմ հանցանքները, որ ճնշում ես սիրտն ու երիկամները, որովհետև իմ մեղքերի հանախությունը չեմ կարող Քեզանից թաքցնել:

Աղաչում եմ Քեզ, մարդասեր Տեր, խաղցր ու բարերար, անոխակալ ու անհիշաչար, մեր նկատմամբ ցույց տուր Քո մարդասիրությունը և օրվա շնորհիվ մեզ պարգևիր մեղքերի թողություն, հոգու զգաստություն, մարմնի առողջություն, մտքի սրբություն ու սրտի մաքրություն՝ ինձ և ողջ ժողովրդին և բոլոր կենդանի ու ննջեցյալ հավատացյալներին:

Աղաչում եմ Քեզ, բարերար Տեր, Քո անարատ ծնողի՝ Սրբուհի Աստվածածնի և Հովհաննես Կարապետի և Սուրբ Ստեփանոս Նախավկայի և Քո սուրբ առաքյալների և մանավանդ սուրբ լեռան վրա Քեզ հետ իսկ հղած աշակերտների և գլխավոր մարգարեներ Սովսեսի ու Եղիայի և բոլոր սուրբ վկաների և Սուրբ Հակոբ առաքյալի ու առաջին Հայրապետի բարեխոսությամբ օրհնիր Քո ժողովրդին՝ Քո սուրբ անունը փառաբանողներին, և մեր աղաչանքները բարու մեջ ավարտիր:

Իր ուխտով հանդերձ ներկայումս անշարժ մնալու մեջ հաստատիր Քո սուրբ ընդհանրական եկեղեցին, հայրապետական վիճակները, վարդապետական շնորհները, երիտասարդներով պայծառացած քահանայական կարգերը:

Հաստատության վեմի վրա նորոգված ու պայծառ պահիր Քո սուրբ եկեղեցին՝ բոլոր տեսակի երևելի ու աներևույթ փորձություններից:

Եվ Քո սուրբ և պատվական Խաչի զորությամբ, որի վրա քամվել ես պատվական արյամբ՝ անմեկնելի հեղյուսումով, սրա հովանու տակ պատսպարված պահիր բոլոր Քեզ հավատացողներին՝ ըստ յուրաքանչյուրի կարգի, եպիսկոպոսներին, երեցներին, սարկավագներին և Քո Սուրբ եկեղեցու ամբողջ ուխտին, և բարեկարգության հորդորներ տուր սրանց:

Քո սուրբ խաչի զորությամբ ամրացրու թագավորներին ու իշխաններին և նրանց զորքերին, որպեսզի հաղթող լինեն բոլոր պատերազմներում:

Եվ լռեցրու Քո սուրբ ուխտի թշնամիներին և հնազանդեցրու սրանց ուսերի տակ:

Ճգնավորական հանդեսով առանձնացածներին պարսպիր թշնամու բոլոր որոգայթներից՝ անսայթաք վարքով անսասանելի պահելով մինչև վերջ:

Ամուսնացածներին պահիր, Տեր, սրբությամբ ու արդարությամբ՝ միմյանց հետ մնալու Հոգու սիրով, և նրանց երեխաներին սնիր ու աճեցրու Քո երկյուղով ու սիրով և փրկիր նրանց տղայական պատահարներից:

Մերերին զգաստության հոգի շնորհիր ելնելիս ու մտնելիս՝ աշխարհից հրաժարումով:

Քո ամենազոր խաչի հովանու ներքո և օրվա շնորհիվ պահպանիր, Տեր, ամենքին՝ հեռավորներին ու մերձավորներին, և նրանց, ովքեր ծովում են և ուղեցնացությունների, պես-պես վտանգների, ցավերի ու նեղությունների մեջ:

Գերյալներին վերադարձ շնորհիր, Տեր, բանտարկյալներին՝ ազատում, կապվածներին՝ արձակում, մեղքերին՝ լուծում, դևերին՝ հալածում, հավատացյալների պատերազմներին՝ հաղթություն:

Պապանձեցրու, Տեր, հերձվածողների բերանները, հանգցրու և լռեցրու օտար ու ընտանի թշնամիների խռովությունները:

Շրջելով կործանիր Քո Սուրբ Եկեղեցու վրա հարձակվողներին:

Պահիր, Տեր, Քո բանավոր հոտը գազաններից, սողուններից ու բունավոր ճիճուներից, գլորվելուց, ընկղմվելուց, հրկիզությունից, ջրահեղձությունից, սառնամանիքից, ավազակներից, տապախառն օդից, հողմերի սաստկությունից ու բոլոր վնասակար տարերքներից, որովհետև բոլոր գոյերը լսում և հնազանդվում են Քո հրամանին:

Օրհնիր, Տեր, այս տարին և այս տարվա պտուղները՝ անփորձ պահելով ամեն տեսակի ցասումից, և Քո աջը, Տեր, թող մեր վրա լինի տարվա սկզբից մինչև ավարտը:

Սմանչացրու այս օրվա շնորհը, Տեր, մարդու և անասունի մեջ՝ կենդանի ու անկենդան, ամպերի, օդերի, բույսերի ու տունկերի մեջ, և անվնաս պահիր բոլոր պատահարներից ու փորձություններից, որոնք մեզ վրա են գալիս Քո հրամանով:

Սիրով ու արդարությամբ, խաղաղությամբ ու առողջությամբ հաջողություն տուր մեր կյանքին՝ մեր վախնալը կնքելով ամենայն ուղղափառ դավանությամբ:

Հիշիր, Տեր, նաև ննջեցյալներին, ովքեր ուղիղ հավատով ավարտեցին իրենց կյանքը, և նրանց հանգիստ շնորհիր արդարների կայաններում, ջնջիր նրանց հանցանքների ձեռագիրը, թողություն տուր նրանց կամա ու ակամա, գիտակցական ու անգիտակցական մեղքերին:

Որպեսզի Քո հրաբորբոք գալստյան վերջին օրը ամենքին արժանացնես լուսեղեն ամպերով բռչել Քեզ ընդառաջ, Տեր, և հանդիպել Քեզ վերին Սիոնում, և եռահյուսված սրբասացությունը Քո բոլոր սրբերի հետ երգենք տնօրինողիդ՝ Հոր և ամենասուրբ Հոգուդ հետ՝ յհատնող օրհնությամբ:

Որ օրհնված ես, գովված, բարեբանված, բարեհամբավված և առավել փառավորված երկնավորներից ու երկրավորներից, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

(Տե՛ս «Ճաշոց գիրք Հայաստանեայց եկեղեցւոյ» Վաղարշապատ 1872)

Գրաբարից աշխարհաբարի վերածեց
Միքայել Ծ. վրդ. Աջապահյանը